

Կոլտո իր այսչափ խոհեմ՝ եւ զգուշաւոր ընթացքով ալ, սակայն. չկրցաւ զերծիլ «սեւագլուխ» ներու նախանձէն եւ հարկաւ անոնց սագրանքով լարուած ռամիկ նախատինքներէն. այնպէս որ այս շատ մեծ մարդը նշաւակ եղաւ նոյն իսկ ամէնէն գառն յարձակումներու:

Պատմաճեան Գրիգոր Պատրիարք՝ ժամանակակից նշարաւոր եկեղեցականներու նախանձոտներու ձեռքէն քաղածները պատմելու ատեն՝ Կոլտոի մասին ալ կը խօսի. — «Ովանէս Պատրիարքն Կոստանդնուպօլսոյ, աշակերտակից նոյնոյ բոյն Սաղիմայ (խօսքը Շղթայակիրին վրայ է), որ իբրեւ երկրորդ Ոսկեբերան եղեւ ի յիւրում ժամանակին, քանիցս անգամ ի յիւր ազգէն եւ ի յիւր ժողովրդոցն յարեան ի վերայ նորա ի մէջ յեկեղեցւոյն սուսերօք եւ բրօք, վասն ճանաչելոյ նորին զճշմարտութիւն եւ հետեւելոյն նմա. որ ոչ սակաւ զազմուկս յարուցին եւ նախատական բանս եւ հայհոյութիւնս խօսեցան եւ այնքանս, որք կամէին ի կենաց հանել զինքն, որ հազիւ զերծաւ եւ կարաց զանձն իւր ապրեցուցանել ի ձեռաց խտասրտաց անօրինաց եւ այնպիսի տիրատեաց ժողովրդոց»:

Հաւանաբար այս տգեղ դէպքերը տեղի ունեցան 1737 ին, երբ Շղթայակիրը Պոլիս կը գտնուէր եւ «Ով հրաշալի» շարականին երեք երգեցողութիւնը արգիլուեցաւ եւ ասոր հետեւանքով Մայր-եկեղեցւոյ մէջ յառաջ եկած «զաղաղակն եւ զչիթ» Շղթայակիր անձամբ լսեց, տեսաւ եւ արձանագրեց:

Կոլտոի լայն եւ զգուշաւոր ընթացքը աւելորդ է Պատմաճեանի հայեացքով դատել եւ լատինամիտութիւն մը տեսնել անոր վրայ. Պատ-

նոր կենսագիրը, Հ. Յ. Թորոսեան կը սխալի երբ «Թեբեւս»-ով Կոլտոին կը վերագրէ այն խիստ ձեռնակները զորս ըրաւ Յովհաննէս պատրիարք Գանձակեցին (Վարդ + Միկելաբոյ էջ 303. հմմտ. Չամչեան աւր 758—761):